# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## 08.02.2017Թ. N 02 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

## ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*08 փետրվարի 2017թվականի N 07*

*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի.*

Հրազդան համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

***Հաստատել Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 8-ի N2 արտահերթ նիստի օրակարգը.***

*1.Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին ստեղծելու մասին*
*2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կողմից վարչական ստուգումների արդյունքների քննարկման մասին*
*3.Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Հրազդանի տարածքային բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին*
*4.Հրազդան համայնքի 2017 թվականի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին*
*5.Հրազդան համայնքի 2017 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին*
*6.Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N 175-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին*
*7.Հրազդան համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին*
*8.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի և գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերը աճուրդային կարգով օտարելու մասին*
*9. Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N 158 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին*

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ

4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

5. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ

6. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

10. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

11. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

12. ՕՀԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*08 փետրվարի 2017թվականի N 08*

### *ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի.*

Հրազդան համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*Ստեղծել համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին հետևյալ կազմով՝*

*-Արամ Դանիելյան-համայնքի ղեկավար-հանձնաժողովի նախագահ*
*-Գեղամ Տիգրանյան-համայնքի ղեկավարի տեղակալ-հանձնաժողովի անդամ*
*-Աշոտ Միքայելյան-աշխատակազմի քարտուղար- հանձնաժողովի անդամ*
*-Ալվինա Զաքարյան-մամուլի քարտուղար- հանձնաժողովի անդամ*
*-ՍամվելՀարությունյան-ֆինանսական բաժնի պետ- հանձնաժողովի անդամ*
*-Սամվել Գրիգորյան-հարկային բաժնի պետ- հանձնաժողովի անդամ*
*-Մյասնիկ Կոստանյան-տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի պետ- հանձնաժողովի անդամ*
*-Գագիկ Ստեփանյան-տրանսպորտի, առևտրի և սպասարկումների կանոնակարգման բաժնի պետ- հանձնաժողովի անդամ*
*-Վլադիմիր Գյուրջյան-ներքին աուդիտի բաժնի պետ- հանձնաժողովի անդամ*
*-Վերոնիկա Նուրիջանյան-քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնի պետ - հանձնաժողովի անդամ*
*-Շոթա Խաչատրյան-բնակֆոնդի շահագործման և կոմունալ տնտեսության բաժնի պետ- հանձնաժողովի անդամ*
*-Ալվարդ Մարտիրոսյան-N8 նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրեն- հանձնաժողովի անդամ*
*-Գեղամ Միքայելյան-կրթության, մշակույթի և սպորտի բաժնի պետի տեղակալ-հանձնաժողովի անդամ*
*-Պետիկ Մարգարյան- տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի պետի տեղակալ- հանձնաժողովի անդամ*
*-Էդվարդ Տիգրանյան- բնակֆոնդի շահագործման և կոմունալ տնտեսության բաժնի պետի տեղակալ- հանձնաժողովի անդամ*

*-Վարդիթեր Սուքիասյան-ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ- հանձնաժողովի անդամ*
*-Սոնիկ Անտոնյան- ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ-հանձնաժողովի անդամ*
*-Վոլոդյա Ավետիսյան-ավագանու անդամ-հանձնաժողովի անդամ*
*-Մելսիկ Զաքարյան- ավագանու անդամ-հանձնաժողովի անդամ*
*- Ռաֆայել Օհանյան- ավագանու անդամ-հանձնաժողովի անդամ*
*-Գենյա Նահապետյան- հանձնաժողովի անդամ*

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
5. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
6. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ
10. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ
11. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ
12. ՕՀԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*08 փետրվարի 2017թվականի N 09*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՉԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետի.*

Հրազդան համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*1.2016 թվականի նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 7-ը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կողմից համայնքապետարանի աշխատակազմում և ենթակայության կազմակերպություններում անցկացված վարչական ստուգումների արդյունքները ընդունել ի գիտություն:*

*2.Հանձնարարել աշխատակազմին կազմել ժամանակացույց և սեղմ ժամկետներում վերացնել աշխատակազմում և համայնքապետարանի ենթակայության կազմակերպություններում նշված թերությունները:*

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
5. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
6. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ
10. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ
11. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ
12. ՕՀԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*08 փետրվարի 2017թվականի N 10-Ն*

### *ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀՐԱԶԴԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի.*

Հրազդան համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*Հաստատել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Հրազդանի տարածքային բաժնի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:*

Կողմ -12　　　　Դեմ -0　　　　Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
5. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
6. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ
10. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ
11. ՊՈՂՈՍՅԱՆ ԶՈՎԻԿ
12. ՕՀԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝　　　　ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

*Հավելված*
*Հրազդան համայնքի ավագանու*
*2017 թվականի փետրվարի 8-ի*
*թիվ 10-Ն որոշման*

Կազմված է 08 փետրվար 2017թ.
Բաղկացած է 3 թերթերից
«Հաստատված է»`
ՀՀ Կոտայքի մարզի
Հրազդան համայնքի
ավագանու 08 հուլիս 2017թ.
N 10-Ն որոշմամբ

Համայնքի ղեկավար`

________________Ա. Դանիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔ

# ՔԿԱԳ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2017 թվական

Հավելված
Հաստատված է ՀՀ փոխվարչապետ,
ՀՀ տարածքային կառավարման նախարարի
2009 թվականի հուլիսի 30-ի N16-Ն և
ՀՀ արդարադատության նախարարի
2009 թվականի հուլիսի 29-ի N144-Ն
համատեղ հրամանով

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Հրազդան համայնքի ղեկավարի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժինը աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է /այսուհետ՝ բաժին/, որը «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործառույթներ:
2. Բաժինը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով սահմանված կարգով՝ համայնքի ավագանու որոշմամբ: Բաժինը գործում է իր կանոնադրության համաձայն, որը հաստատում է համայնքի ղեկավարը:
3. Բաժնի լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:
4. Բաժինը իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:
5. Բաժինն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և բաժնի հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:

## 2. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Բաժնի նպատակները և խնդիրներն են՝

1) քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների իրականացումը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.
2) տարածքային բաժնի արխիվի վարում.
3) կատարված քաղաքացիական կացության ակտերի գրանցումների վերաբերյալ օրենսդրությամբ

սահմանված կարգով տեղեկատվության տրամադրումը.
4) օրենքով նախատեսված այլ նպատակներ և խնդիրներ:

## 3.ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Բաժինն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները.
1) իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի հետևյալ պետական գրանցումները.
ա. ծնունդը
բ.ամուսնությունը
գ.ամուսնալուծությունը
դ. որդեգրումը և հայրության որոշելը
զ. անվան փոխումը
է. մահը
2) իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրառումներում ուղղումներ, լրացումներ կամ փոփոխություններ
3) իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրառումների վերականգնումը
4) իրականացնում է օրենքով նախատեսված այլ գործառույթներ:

## 4.ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8) Բաժնի գործունեությունը կազմակերպում է այն համայնքի ղեկավարը, որտեղ գտնվում է համապատասխան բաժինը:
9) Բաժնի անմիջական ղեկավարումն իրականացնում է բաժնի պետը:
10) Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման ճշտության և քաղաքացիական կացության ակտերի գրանցումները կազմելու որակի համար պատասխանատու է բաժնի պետը և գրանցում կատարող աշխատողը:
11) Բաժնի պետը՝
1) իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով:
2) կազմակերպում է բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս է հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում է դրանց ժամանակին և պատշաճ կատարումը.
3) կազմակերպում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված իրավական ակտերի կատարումը.
4) կատարում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումները.
5) բաժնի աշխատողների միջև բաշխում է նրանց պարտականությունները.
6) իր իրավասության սահմաններում համագործակցում է պաշտոնատար այլ անձանց հետ.
7) ուսումնասիրում է բաժնի աշխատողների գործունեության դեմ ուղղված բողոքները.
8) քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ իրականացնելիս ստանում է օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված անհրաժեշտ տեղեկություններ և այլ նյութեր.
9) ուսումնասիրում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման համար տրված

դիմումները, կայացնում համապատասխան որոշումներ, պարզաբանում դրանց բողոքարկման ժամկետները և կարգը.

10) իրականացնում է հսկողություն տարածքային բաժնի ծառայողների կողմից աշխատանքային կարգապահության պահպանման, պաշտոնական պարտականությունների՝ ժամանակին և օրենքի պահանջներին համապատասխան կատարման նկատմամբ.

11) վարում է համապատասխան տարածքային բաժնի արխիվը.

12) օրենքով սահմանված կարգով համապատասխան մարմիններին տրամադրում է տեղեկատվություն՝ կատարված քաղաքացիական կացության ակտերի գրանցումների վերաբերյալ.

13) աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում բաժնի համայնքային ծառայողների նկատմամբ խրախուսանքի և կարգապահական տույժերի միջոցներ կիրառելու մասին առաջարկություններ.

14) համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնում է հաշվետվություն բաժնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ.

15) պատասխանատվություն է կրում բաժնի առջև դրված խնդիրների լուծման համար.

16) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ:

11. Բաժնի աշխատողը՝

1) բաժնի պետի հանձնարարությամբ կատարում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումներ, վկայականների, տեղեկանքների, ակտային պատճենների և այլ փաստաթղթերի տրամադրման գործավարություն.

2) իր լիազորությունների շրջանակներում վարում է բաժնի արխիվը.

3) կատարում է բաժնի պետի ցուցումները և հանձնարարականները.

4) բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է բաժնի առջև դրված գործառույթներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.

5) իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է բաժնի պետին.

6) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը.

7) բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է բաժնի փաստաթղթային սպասարկումը, ապահովում է փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները.

8) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

9) իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև բաժնի պետի հանձնարարությամբ, նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.

10) իրականացնում է օրենքով և իրավական ակտերով նախատեսված լիազորություններ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*08 փետրվարի 2017թվականի N 11-Ն*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի.*

Հրազդան համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի «Հրազդան համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 175-Ն որոշմամբ հաստատված բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից կատարել հետևյալ հատկացումները՝*

*Ծախսային մաս՝*

*1. Հրազդան համայնքի 2017 թվականի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից հատկացնել՝*

*1) 19000.0 հազար դրամ 4 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի /5113/ «Շենքերի և շինությունների կապիտալ նորոգում» հոդվածին, փողոցների և ճանապարհների կապիտալ նորոգման աշխատանքներ կատարելու համար:*

*2) 1000.0 հազար դրամ 4 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի /5134/ «Նախագծահետազոտական ծախսեր» հոդվածին՝ նախագծեր կազմելու համար:*

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
5. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
6. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

10. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

11. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

12. ՕՀԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*08 փետրվարի 2017թվականի N 12-Ն*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի,*

Հրազդան համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի «Հրազդան համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 175-Ն որոշմամբ հաստատված բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից կատարել հետևյալ հատկացումները՝*
*1.Ծախսային մաս՝*
*Հրազդան համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել՝*
*1) 1000.0 հազար դրամ 1 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ծրագրի «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» /4252/ հոդվածին՝ մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում կատարելու համար:*
*2) 14000.0 հազ. դրամ 4 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» /4251/ հոդվածին՝ փողոցների և ճանապարհների ընթացիկ նորոգման աշխատանքները կատարելու համար:*
*3) 1000.0 հազար դրամ 1 բաժնի 6 խմբի 1 դասի 60 ծրագրի «Մասնագիտական ծառայություններ» /4241/ հոդվածին՝ հողամասերի չափագրման և քարտեզագրման ծախսերի համար:*
*4) 500.0 հազար դրամ 1 բաժնի 6 խմբի 1 դասի 60 ծրագրի «Պարտադիր վճարներ»/4823/ հոդվածին՝ գույքի պետական գրանցման աշխատանքների համար:*

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

5. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ

6. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

10. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

11. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

12. ՕՀԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*08 փետրվարի 2017թվականի N 13-Ն*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 175-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարի առաջարկությունը.*

Հրազդան համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի «Հրազդան համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 175-Ն որոշմամբ հաստատված բյուջեի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝*

*1.Եկամտային մասում՝*

*1) «Համայնքի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջե եկամուտների, կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումար» տողի «0» թիվը փոխարինել «34.5» թվով:*

*2. Ծախսային մասում՝*

*1) 1 բաժնի խմբի 1 դասի 51 ծրագրի «Էներգետիկ ծառայություններ» /4212/ հոդվածում «27600.0» թիվը փոխարինել «27634.5» թվով:*

*Ընդամենը բյուջեի փոփոխությունը կազմում է 34.5 հազար դրամ.*

*Բյուջեի թիվը և ՛ եկամտային, և ՛ ծախսային մասում կազմում է 1235034.5 հազար դրամ:*

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
5. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
6. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

10. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

11. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

12. ՕՀԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*08 փետրվարի 2017թվականի N 14*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարի առաջարկությունը.*

Հրազդան համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*Հրազդանի համայնքապետարանի սեփականություն համարվող Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 107 շենքի 42-43 բնակարանին կից 25.16քմ մակերեսով սանհանգույցը, խոհանոցը, միջանցքը և պատշգամբը անհատույց օտարել Սոֆի Նիկոլայի Գյուլումյանին, ծնված 1964 թվականի հունիսի 20-ին, անձնագիր 60 10 871258, տրված 2010 թվականի նոյեմբերի 29-ին, 610-020-ի կողմից :*

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
5. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
6. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ
10. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ
11. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ
12. ՕՀԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*08 փետրվարի 2017թվականի N 15*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.*

Հրազդան համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*1.Թույլատրել աճուրդային կարգով օտարել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հետևյալ հողամասերը.*

*1)Ջրառատ թաղամաս դեպի Կաքավաձոր տանող ավտոճանապարհին հարող տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերից 6.9423 հա մակերեսով հողամասը՝ 750000 /յոթ հարյուր հիսուն հազար/ դրամ մեկնարկային գնով /ծածկագիր՝ 0697-0001/:*

*2)Ջրառատ թաղամաս դեպի Կաքավաձոր տանող ավտոճանապարհին հարող տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերից 1.2932 հա մակերեսով հողամասը՝ 140000 /մեկ հարյուր քառասուն հազար/ դրամ մեկնարկային գնով /ծածկագիր՝ 0696-0009/:*

*3)Ջրառատ թաղամաս դեպի Կաքավաձոր տանող ավտոճանապարհին հարող տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերից 0.7798 հա մակերեսով հողամասը՝ 84000 /ութսունչորս հազար/ դրամ մեկնարկային գնով /ծածկագիր՝ 0695-0015/:*

*4)Ջրառատ թաղամաս դեպի Կաքավաձոր տանող ավտոճանապարհին հարող տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերից 1.0846 հա մակերեսով հողամասը՝ 117000 /մեկ հարյուր տասնյոթ հազար/ դրամ մեկնարկային գնով /ծածկագիր՝0694-0012/:*

*5)Ջրառատ թաղամաս դեպի Կաքավաձոր տանող ավտոճանապարհին հարող տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերից 0.3971 հա մակերեսով հողամասը՝ 43000 /քառասուներեք հազար/ դրամ մեկնարկային գնով /ծածկագիր՝ 0693-0017/:*

*6)Ջրառատ թաղամաս դեպի Կաքավաձոր տանող ավտոճանապարհին հարող տարածքում*

գտնվող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերից 0.3426 հա մակերեսով հողամասը՝ 37000 /երեսունյոթ հազար/ դրամ մեկնարկային գնով /ծածկագիր՝0692-0019/:

7)Զրառատ թաղամաս դեպի Կաքավաձոր տանող ավտոճանապարհին հարող տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերից 15.7970 հա մակերեսով հողամասը՝ 1700000/մեկ միլիոն յոթ հարյուր հազար/ դրամ մեկնարկային գնով /ծածկագիր՝0500-0086/:

8)Զրառատ թաղամաս, Հայ Ֆիդայիների փողոց թիվ 58/1 հասցեում գտնվող 560.0քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 700000 /յոթ հարյուր հազար/ դրամ մեկնարկային գնով /կադաստրային ծածկագիր՝ 07-001-0169-0013/:

9)Վանատուր թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա 68/6 հասցեում գտնվող 140.0քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 270000 /երկու հարյուր յոթանասուն հազար/ դրամ մեկնարկային գնով /կադաստրային ծածկագիր՝ 07-001-0522-0025/:

10)Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապարակ 41 հասցեում գտնվող 207.0քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 610000 /վեց հարյուր տաս հազար/ դրամ մեկնարկային գնով /կադաստրային ծածկագիր՝ 07-001-0444-0054/:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ

4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

5. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ

6. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

10. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

11. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

12. ՕՀԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*08 փետրվարի 2017թվականի N 16*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 158 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, հիմք ընդունելով մշակույթի կենտրոնի տնօրենի 2017 թվականի փետրվարի 3-ի զեկուցագիրը .*

Հրազդան համայնքի ավագանին *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի «Հրազդանի համայնքապետարանի ենթակայության մշակույթի կենտրոնի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 158 որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը.*

*Հավելվածի՝*

*- «7-րդ» կետի «գրադարանավարուհի» «4» «78000» «312000» նախադասությունը փոխարինել ««գրադարանավարուհի» «5» «78000» «390000» նախադասությամբ:*

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
5. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
6. ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ
7. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
9. ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

10. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

11. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

12. ՕՀԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*